ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԵՎ ԲՆԱԿՎԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԲԻԶՆԵՍ ԱՐՏԱԳԱՂԹՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(2024 ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ)

ԱՌԵՎՏՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ,
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ,
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ,
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ,
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ,
ՆԵՐԳԱՂԹԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ,
ՉԻՆԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ,
ԱՐԺՈՒՅԹԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ,
ՉԻՆԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԽՈՒՄԲ, ՍՊԸ.

ՆԱԽԱԲԱՆ

Օտարերկրյա բիզնես արտագաղթողների համար Չինաստանում աշխատելն ու բնակվելը խրախուսելու նպատակով Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Առևտրի նախարարությունը՝ համագործակցելով համապատասխան գերատեսչությունների հետ, պատրաստել է Չինաստանում աշխատելու և բնակվելու ուղեցույց բիզնես արտագաղթողների համար (2024 հրատարակություն): Այն ներառում է չորս մաս՝ նշումներ, ամենօրյա ծառայություններ, Չինաստանում մնալու և բնակվելու ծառայություններ, ինչպես նաև համապատասխան աշխատանքային ծառայություններ, որոնք ընդգրկում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են բնակության գրանցումը, SIM քարտը, բանկային քարտը, կացության ու աշխատանքի թույլտվությունը, սոցիալական ապահովագրությունը, բջջային հեռախոսի վճարումը, տրանսպորտը, անհատական եկամտահարկի վճարումն ու այլն: Ուղեցույցը կթարմացվի տարեկան կտրվածքով՝ քաղաքականության և ընթացակարգերի փոփոխություններին համապատասխան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նշումներ..... 04

Ամենօրյա ծառայություններ.....07

I. SIM քարտ.....07

II. Բանկային քարտ.....07

III. Բջջային հեռախոսի վճարում.....08

IV. Արտարժույթի փոխանակում..... 09

V. Տրանսպորտ.....09

VI. Բնակուցյան վայր.....14

Չինաստանում մնալու և բնակվելու ծառայություններ.....16

VII. Վիզայի երկարացում..... 16

VIII. Կացության թույլտվություն..... 16

Համապատասխան աշխատանքային ծառայություններ Չինաստանում.....18

IX. Աշխատանքի թույլտվություն.....18

X. Սոցիալական ապահովագրություն..... 19

XI. Անհատական եկամտահարկի վճարում.....20

ՆՇՈՒՄՆԵՐ

I. Բնակության վայրի գրանցումը պետք է ավարտվի Չինաստան մուտք գործելուց հետո հնարավորինս շուտ

(I) Հյուրանոցում բնակվող օտարերկրացիների համար բնակության վայրի գրանցմամբ կարող է զբաղվել հյուրանոցի ղեկավարությունը

Օտարերկրացիները կարող են գրանցել կացության թույլտվություն՝ հյուրանոցի ընդունարանումներ կայացնելով վավեր անձնագիր կամ այլ միջազգային ճանապարհորդական փաստաթղթեր :

(II) Օտարերկրացիները, ովքեր բնակվում են այլ վայրերում, ժամանելուց հետո 24 ժամվա ընթացքում պետք է գրանցեն իրենց բնակության վայրը տեղական ոստիկանության բաժանմունքում:

Օտարերկրացիները կարող են գրանցել իրենց բնակության վայրը տեղական ոստիկանության բաժանմունքում՝ ներկայացնելով վավեր անձնագիր կամ այլ միջազգային ճանապարհորդական փաստաթղթեր, ինչպես նաև վարձակալության պայմանագիր կամ անշարժ գույքի իրավունքի վկայագիր:

II. Հարցեր, որոնք հատուկ ուշադրություն են պահանջում Չինաստանում աշխատող և ապրող օտարերկրացիներից

(I) Վիզայի վավերականության ժամկետը

Օտարերկրացիները, ովքեր մուտքի արտոնագրով մուտք են գործում Չինաստան աշխատելու և ապրելու նպատակով, պետք է դիմեն կացության թույլտվություն ստանալու համար երկիր մուտք գործելու օրվանից 30 օրվա ընթացքում՝ ըստ համապատասխան պահանջների: Եթե վիզայի մեջ նշված է, որ պահանջվում է կացության ժամկետի երկարացում, ապա դիմումը պետք է ներկայացվի տեղական ժողովրդական կառավարության հանրային անվտանգության մարմնի ելքի և մուտքի կառավարման մարմին՝ վարչաշրջանի մակարդակով կամ ավելի բարձր՝ ըստ բնակության վայրի, վիզայում նշված կացության ժամկետը լրանալուց առնվազն 7 օր առաջ՝ հայտին վերաբերող համապատասխան նյութերով:

(II) Կացության թույլտվության վավերականության ժամկետը

Օտարերկրացիները, ովքեր կացության թույլտվության ժամկետը լրանալուց հետո պետք է մնան Չինաստանում, պետք է դիմեն կացության

թույլտվությունը երկարաձգելու համար ժամկետի ավարտից 30 օր առաջ: Վավեր կացության թույլտվություն ունեցող օտարերկրացիները, ովքեր փոխել են անձնագրերը կամ կացության թույլտվության մեջ արվել են որոշակի փոփոխություններ, պետք է դիմեն հանրային անվտանգության մարմնի ելքի և մուտքի կառավարման մարմին տեղեկատվության փոփոխության համար՝ փոփոխություններն անելու օրվանից 10 օրվա ընթացքում:

(III) Աշխատանքի թույլտվության վավերականության ժամկետը

1.Չինաստանում աշխատող օտարերկրացիները պետք է ձեռք բերեն աշխատանքի թույլտվություն: Չինաստանում՝ ոչ ավել, քան 90 օր աշխատողները, պետք է դիմեն Չինաստանի դեսպանություն (հյուպատոսություն) Z տեսակի վիզա ստանալու համար *Օտարերկրացիների Աշխատանքի Թույլտվության համար Ծանուցման Նամակով*, որից հետո Չինաստանում կարող են աշխատել վիզայում նշված ժամանակահատվածում: Նրանք, ովքեր աշխատում են Չինաստանում ավելի քան 90 օր, պետք է դիմեն Չինաստանի դեսպանություն (հյուպատոսություն) Z տեսակի վիզա ստանալու համար *Օտարերկրացիների Աշխատանքի Թույլտվության համար Ծանուցման Նամակով*, այնուհետև պետք է դիմեն Չինաստանում աշխատող օտարերկրացիների վարչական դեպարտամենտ՝ գործատուի գտնվելու վայրում, *Օտարերկրացու Աշխատանքի Թույլտվության* համար, երկիր մուտք գործելու օրվանից 30 օրվա ընթացքում, որից հետո կկարողանան աշխատել Չինաստանում աշխատանքի թույլտվության ժամկետի ընթացքում:

2.Աշխատանքի թույլտվության ժամկետի երկարաձգման դիմումը պետք է ներկայացվի Չինաստանում աշխատող օտարերկրացիների վարչական դեպարտամենտ՝ գործատուի գտնվելու վայրում, *Օտարերկրացու Աշխատանքի Թույլտվության* ժամկետի ավարտից 30 օր առաջ:

3.Անձնական տվյալների (անուն, անձնագրի համար, պաշտոն) ցանկացած փոփոխության դեպքում, պետք է փոփոխության համար դիմում ներկայացվի Չինաստանում աշխատող օտարերկրացիների վարչական դեպարտամենտ՝ գործատուի գտնվելու վայրում, փոփոխություններ կատարելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

(IV) Այլն

1. Օտարերկրացիները սոցիալական ցանցերում մեկնաբանություններ գրելիս պետք է առաջնորդվեն Չինաստանի օրենքներով և կանոնակարգերով:

2. Օտարերկրացիները՝ շներ, կատուներ և այլ ընտանի կենդանիներ պահելու դեպքում պետք է պահպանեն երկրում գործող համապատասխան կանոնները:

3. Օտարերկրացիներին չի թույլատրվում լուսանկարել ռազմական օբյեկտներ, ներառյա՝լ շենքեր, հարթակներ շինություններ, որոնք ուղղակիորեն օգտագործվում են Չինաստանի կողմից ռազմական նպատակներով:

III. Ինչպե՞ս օգնություն ստանալ արտակարգ իրավիճակներում

Մարդկանց վրա հարձակման կամ գույքային հանցագործությունների դեպքում խնդրում ենք զանգահարել 110;

Հրդեհի դեպքում խնդրում ենք զանգահարել 119;

Առաջին օգնության դեպքում խնդրում ենք զանգահարել 120;

Անձնագիրը կորցնելու դեպքում խնդրում ենք անհապաղ տեղեկացնել ոստիկանության տեղական բաժանմունք:

ԱՄԵՆՕՐՅԱ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I. SIM քարտ

(I) Օտարերկրացիները կարող են իրենց անձնագրերով կամ մշտական բնակության ID քարտերով ներկայանալ հետևյալ կապի օպերատորների սպասարկման գրասենյակներ՝ China Telecom, China Mobile, China Unicom և China Broadened դիմելու SIM քարտի համար և ակտիվացնելու բջջային կապի ծառայությունները Չինաստանում:

(II) Բջջային կապի սակագնային պլանները սովորաբար ներառում են խոսակցության ժամանակն ու տվյալները: Տարբեր օպերատորներ տրամադրում են տարբեր սակագնային պլաններ՝ կախված հաճախորդների կարիքներից, որի արդյունքում օգտվողները կարող են ընտրել իրենց համար առավել հարմար տարբերակը:

Նշում՝ Բջջային տվյալների պլանները հաճախ առաջարկում են սահմանափակ քանակությամբ տվյալներ: Դուք կարող եք անջատել ինտերնետ հասանելիությունը, եթե չեք օգտվում ինտերնետ ծառայություններից կամ, եթե տրամադրված տվյալների ծավալը փոքր է: Եթե ձեզ անհրաժեշտ է մեծ քանակությամբ տվյալներ օգտագործել, ապա խորհրդակցեք ձեր օպերատորի հետ համապատասխան տվյալների պլանի վերաբերյալ:

II. Բանկային քարտ

(I) Օտարերկրացիները կարող են իրենց անձնագրերով կամ մշտական կացության նույնականացման քարտերով, ինչպես նաև Չինաստանում գործող բջջային հեռախոսահամարներով մոտենալ կոմերցիոն բանկերի բիզնես գրասենյակներ դիմելու բանկային քարտ ստանալու համար (խնդրում ենք խորհրդակցել բիզնես գրասենյակի հաճախորդների սպասարկման մենեջերի հետ հատուկ պահանջների վերաբերյալ):

(II) Օտարերկրացիները պետք է լրացնեն հաշիվ բացելու համար դիմումի ձևը, նախքան բանկային քարտին դիմելը:

(III) Բանկային քարտը ստանալուց հետո օտարերկրացիները պետք է ժամանակին հաստատեն կամ փոխեն գաղտնաբառը բանկոմատում: Բանկային քարտ ձևակերպելիս խորհուրդ է տրվում ներբեռնել համապատասխան բանկի բջջային բանկային հավելվածը:

(IV) Օտարերկրացիները պետք է ապահով պահեն իրենց բանկային քարտը՝ խուսափելու այն կորցնելուց, և այլ անձանց կամ հանցագործների կողմից չարտոնված օգտագործումից: Քարտը կորցնելու դեպքում խնդրում ենք ժամանակին տեղեկացնել համապատասխան բանկին:

III. Բջջային հեռախոսի վճարում

(I) Օտարերկրացիները կարող են ներբեռնել WeChat կամ Alipay հավելվածները և հետևել հրահանգներին՝ մուտքագրելու օտարերկրյա կամ չինական բջջային հեռախոսահամարներ հաշիվ գրանցելու համար:

(II) Օտարերկրացիները կարող են հավելվածը կցել Mastercard, Visa, JCB, Diners Club միջազգային բանկային քարտերին, և բացահայտել չինական բանկի պատկերանշանները կամ քարտերը UnionPay-ի պատկերանշանով:

(III) Օտարերկրացիները կարող են սկանավորել կամ ցույց տալ QR կոդը վճարումներ կատարելիս:

Նշումներ ինչպես հավելվածը կցել միջազգային բանկային քարտերին

1. Միջազգային բանկային քարտը Alipay-ին կամ WeChat-ին կցելիս անհրաժեշտ է օտարերկրյա թողարկող բանկից ստանալ թույլտվություն: Այնուամենայնիվ, որոշ թողարկող բանկեր կարող են մերժել այդ պահանջը, քանի որ իրենց համակարգը անկարող է ճանաչել միացման տեղեկատվությունը: Նման դեպքերում խորհուրդ է տրվում դիմել թողարկող բանկի հաճախորդների սպասարկման կենտրոն կամ փախարենը հաշվի առնել չինական բանկային քարտ օգտագործելու հնարավորությունը:

2. Երբ օգտվողները Alipay-ը կամ WeChat-ը օգտագործում են QR կոդով վճարումներ կատարելու համար կցված միջազգային բանկային քարտի միջոցով, ապա գործարքի գումարը 200 յուանը չգերազանցելու դեպքում չեն վճարում լրացուցիչ սպասարկման վճար; սակայն գումարը 200 յուանը գերազանցելու դեպքում, պետք է վճարեն ծառայության վճար՝ գործարքի գումարի 3% - ի չափով:

3. Alipay-ը և WeChat-ը սահմանել են իրենց կցված միջազգային բանկային քարտերի համար գործարքների սահմանաչափեր՝ տարեկան 50,000 ԱՄՆ դոլարի սահմանաչափով, իսկ մեկ գործարքի համար 5,000 ԱՄՆ դոլարի սահմանաչափով: Նրանց, ում միջազգային բանկային քարտերը կցված են հավելվածներին, խորհուրդ է տրվում նախքան բջջային վճարումներ կատարելը, հաշվի առնել իրենց համար հատուկ օգտագործման դեպքերը:

(Ⅳ) Alipay HK, WeChat pay HK (Հոնկոնգ ՀԱՇ), pay (Մակաո ՀԱՇ), KakaoPay (Կորեայի Հանրապետություն), Touch 'n Go wallet (Մալայզիա), HiPay (Մոնղոլիա), Changi Pay (Սինգապուր), OCBC (Սինգապուր), Never Pay (Կորեայի Հանրապետություն), Toss Pay (Կորեայի Հանրապետություն) և TrueMoney (Թաիլանդ) հավելվածներից օգտվողները կարող են QR կոդով վճարումներ կատարել այս էլեկտրոնային դրամապանակների միջոցով Չինաստանի մայրցամաքում:

IV. Արտարժույթի փոխանակում

(I) Չինաստան ժամանող օտարերկրացիները կարող են նախքան Չինաստան գալը նախապես փոխանակել արտարժույթը յուանի համապատասխան երկրներում կամ տարածաշրջաններում (յուրաքանչյուր այցելուին թույլատրվում է իր հետ բերել կամ երկրից հանել մինչև 20,000 յուան կանխիկ գումար):

(II) Չինաստան ժամանող օտարերկրացիները կարող են արտարժույթը փոխանակել յուանի առևտրային բանկերի մասնաճյուղերում, տարադրամի փոխանակման կետերում և արտարժույթի փոխանակման ինքնասպասարկման սարքերում միջազգային օդանավակայաններում, ցամաքային նավահանգիստներում, նավահանգիստներում և մուտքի այլ կետերում կամ կանխիկացնել յուանը բանկոմատներում՝ օգտագործելով միջազգային բանկային քարտեր:

Ⅴ.Տրանսպորտ

(I) Գնացք

- **Ինչպես գնել տոմս**

1. *Օգտագործելով անձը հաստատող փաստաթղթեր:* Օտարերկրյա ճանապարհորդները կարող են օգտագործել անձը հաստատող հետևյալ վավեր փաստաթղթերը երկաթուղային կայարանի տոմսարկղերում և տոմսերի գործակալություններում տոմսեր գնելիս կամ երկար ճանապարհորդության համար վճարելիս՝

(1)Օտարերկրյա պետության մշտական կացության ID քարտը
(2)Անձնագիրը
(3)Օտարերկրացու ելքի-մուտքի թույլտվությունy
(4)Նավաստիի վկայականը

(5)Չինաստանի հասարակական անվտանգության մարմինների ելքի և մուտքի վերահսկման գրասենյակի կողմից տրված վիզայի դիմումի ընդունման անդորրագիրը
(6) Անձնագիրը կորցնելու մասին տեղեկանքը
(7)Չինաստանում դեսպանությունների և հյուպատոսությունների կողմից տրված ժամանակավոր միջազգային ճանապարհորդական փաստաթուղթը (կցված՝ Չինաստանի հասարակական անվտանգության մարմինների ելքի և մուտքի վերահսկման գրասենյակի կողմից տրված վավեր վիզաներին կամ կացության վկայականներին):

Օտարերկրյա ճանապարհորդները կարող են օգտագործել իրենց մշտական բնակության ID-ներն ու անձնագրերը տոմսեր գնելու համար 12306 կայքի կամ հավելվածի միջոցով, ինչպես նաև ամրագրումների համար թեժ գծի միջոցով: Նրանք կարող են նաև օգտագործել իրենց մշտական բնակության ID-ները՝ ինքնասպասարկման մեքենաներից տոմսեր գնելու:

2. *Ինքնության ստուգում:* Ուղևորների անվտանգ և կանոնավոր փոխադրումն ապահովելու համար Չինաստանի երկաթուղային օպերատորն իրականացնում է իրական անունով տոմսերի ձևակերպում՝ համապատասխան գործող կանոնակարգերի: Օտարերկրյա ճանապարհորդները պետք է անցնեն ինքնության ստուգում՝ նախքան տոմսեր գնելը:

(1) Դուք կարող եք մուտք գործել 12306 կայք կամ հավելված ձեր անունը, քաղաքացիությունը, նույնականացման համարն ու այլ տեղեկություններ մուտքագրելու համար՝ հետևելով հրահանգներին: Համակարգն ավտոմատ կերպով կավարտի ինքնության ստուգումը: Կամ, կարող եք վերբեռնել անձնագրի լուսանկարը ձեռքով ստուգելու համար:
(2) Կարող եք նաև վավեր անձնագիրը ներկայացնել երկաթուղային կայարանի տոմսարկղ ինքնությունը ստուգելու համար:

3. *Ինչպես գնել տոմս:* Ինքնությունը հաստատելուց հետո օտարերկրյա ճանապարհորդները կարող են տոմսեր գնել:

(1) Տոմսերը կարող եք ձեռք բերել առցանց 12306 կայքի կամ հավելվածի միջոցով և վճարել դրանք Alipay, WeChat կամ UnionPay բանկային քարտերով:
(2) Տոմսերը կարող եք ձեռք բերել նաև երկաթուղային կայարանի տոմսարկղից և վճարել կանխիկ կամ Alipay, WeChat կամ UnionPay բանկային քարտերով: Որոշ երկաթուղային կայարաններում տեղադրված են նաև ինքնասպասարկման մեքենաներ տոմսեր գնելու համար:

■ **Ինչպես փոխել տոմսը**

Օտարերկրյա ճանապարհորդները կարող են փոխել իրենց տոմսերը 12306 կայքում և հավելվածում, ինչպես նաև երկաթուղային կայարանի տոմսարկղում:

■ **Տոմսի գումարի վերադարձ**

Օտարերկրյա ճանապարհորդները կարող են չեղարկել իրենց տոմսերը 12306 կայքում և հավելվածում, կամ երկաթուղային կայարանի տոմսարկղում: Կախված չեղարկման ժամից, կարող է գանձվել սպասարկման վճար:

■ **Մուտք/ելք երկաթուղային կայարան և գնացք նստելը**

Օտարերկրյա ճանապարհորդները կարող են մուտք գործել և դուրս գալ երկաթուղային կայարան ավտոմատ կամ ձեռքով իրականացվող տոմսերի ստուգման կետերով՝ ներկայացնելով անձը հաստատող վավեր փաստաթղթերի բնօրինակները, որոնցով գնվել են տոմսերը: Փաստաթղթերն անհրաժեշտ են նաև ճանապարհին տոմսի ստուգումն անցնելու համար:

Համապատասխան կանոնակարգերի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք այցելել 12306 կայք կամ հավելված, կամ զանգահարել China Railway հաճախորդների սպասարկման թեժ գիծ (12306) խորհրդատվության համար:

12306 կայքի հասցեն է՝ https://www.12306.cn/en/index.html

(II) Օդանավ

Օտարերկրյա ճանապարհորդները կարող են տոմսեր պատվիրել առցանց ավիաընկերության պաշտոնական հավելվածում և WeChat mini ծրագրում, ինչպես նաև տոմսեր գնելու համար նախատեսված այլ հարթակներում:

■ **Ինչպես գնել տոմս**

(1) Կարող եք տոմս գնել ավիաընկերության պաշտոնական հավելվածում և WeChat mini ծրագրում և վճարել դրանք Alipay, WeChat կամ UnionPay բանկային քարտերով:

(2) Կարող եք նաև տոմսեր գնել օդանավակայանում և վճարել կանխիկ կամ WeChat-ի, Alipay-ի կամ բանկային քարտերի միջոցով՝ հետևելով ավիաընկերության կանոնակարգերին:

■ Ինչպես փոխանակել կամ վերադարձնել տոմսի գումարը

Օտարերկրյա ճանապարհորդները կարող են փոխանակել կամ վերադարձնել իրենց տոմսերի գումարը տոմսեր գնելու համար նախատեսված հարթակներում կամ օդանավակայանում: Կարող են գանձվել վճարներ, որոնք կարգավորվում են ավիաընկերության կանոնակարգերով:

(III) Մետրո

Մետրո գործում է Չինաստանի 55 քաղաքներում: Օտարերկրյա ճանապարհորդները կարող են մետրոյի տոմս ձեռք բերել մետրոյի կայարանում կամ օգտագործել Alipay հավելվածը մետրոյով երթևեկելու համար:

1. Օտարերկրյա ճանապարհորդները կարող են ձեռք բերել միակողմանի տոմս տոմսարկղում կամ մետրոյի կայարանում տեղադրված ինքնասպասարկման մեքենաներում: Հաճախակի ճանապարհորդողները կարող են մետրոյի տոմսեր ձեռք բերել տոմսարկղում՝ ներկայացնելով անձնագիրը: Վճարումը կարելի է իրականացնել կանխիկ, ինչպես նաև օգտագործելով WeChat-ը կամ Alipay-ը:

2. Օտարերկրյա ճանապարհորդները կարող են ներբեռնել Alipay հավելվածն իրենց բջջային հեռախոսներում, սեղմել "Տրանսպորտ" և ընտրել "Քաղաք": Ինքնության ստուգումն ավարտելուց հետո դուք կստանաք QR կոդ մետրոյով երթևեկելու համար: Դուք կարող եք մուտք գործել և դուրս գալ մետրոյի կայարանից՝ օգտագործելով QR կոդի սկաները:

(IV) Ավտոբուս

Օտարերկրյա ճանապարհորդները ավտոբուսից օգտվելու համար կարող են վճարել կանխիկ, ավտոբուսի քարտերով կամ Alipay հավելվածով :

1. Օտարերկրյա ճանապարհորդները կարող են վճարել կանխիկ (RMB-յուան) ավտոբուսներից օգտվելու համար: Ավտոբուսներում սովորաբար չեն լինում մանրադրամներ, ուստի պետք է նախապես պատրաստել վճարի համար մանր գումարը:

2. Օտարերկրյա ճանապարհորդները կարող են իրենց անձնագրերով ներկայանալ ավտոբուսային ընկերությունների սպասարկման կետեր ավտոբուսի քարտեր ձեռք բերելու համար: Քարտերի համար վճարը կարող է կատարվել կանխիկ կամ WeChat-ի կամ Alipay-ի միջոցով:

3. Օտարերկրյա ճանապարհորդները պետք է ներբեռնեն Alipay հավելվածը, սեղմեն "Տրանսպորտ" և ընտրեն "Քաղաք": Ինքնության ստուգումն ավարտելուց հետո դուք կստանաք QR կոդ հանրային տրանսպորտից օգտվելու համար: Ավտոբուս նստելիս և իջնելիս պետք է սկանավորել QR կոդը:

(V) Օնլայն մեքենայի ծառայություն

Օտարերկրյա ճանապարհորդները կարող են օգտագործել Alipay-ն ու WeChat-ը օնլայն մեքենա պատվիրելու համար:

1. Օտարերկրյա ճանապարհորդները պետք է ներբեռնեն Alipay հավելվածը, սեղմեն "Տրանսպորտ" և ընտրեն "Քաղաք"՝ նշելով հաճախորդին վերցնելու վայրն ու վերջնակետը մեքենա պատվիրելու համար:

2. Օտարերկրյա ճանապարհորդները կարող են բացել WeChat հավելվածը, սեղմել "Ես-Me", ընտրել "Ծառայություններ-Services", իջնելով ներքև՝ սեղմել "Տեղափոխություն-Mobility" կամ "Պատվիրել մեքենա-Ride Hailing", այնուհետև նշելով հաճախորդին վերցնելու վայրն ու վերջնակետը՝ պատվիրել մեքենա:

3. Ներբեռնեք Didi-Greater China հավելվածը, որը թույլ է տալիս օտարերկրացիներին գրանցվելու համար օգտագործել օտարերկրյա բջջային հեռախոսահամարներ ու միջազգային վարկային քարտեր, և գրանցվելուց հետո կարող եք պատվիրել առցանց մեքենա ծառայություն: Բացեք Didi-Greater China հավելվածը, հաստատեք հաճախորդին վերցնելու վայրն ու վերջնակետը, ընտրեք ձեր նախընտրած ծառայությունը (Էքսպրես, Տաքսի, Պրեմիում, Լյուքս) և պատվիրեք տրանսֆեր:

(VI) Ավտոմեքենաների վարձույթի ծառայություններ

Օտարերկրյա ճանապարհորդները կարող են մեքենաներ վարձակալել միջազգային օդանավակայաններում և քաղաքի կենտրոնում գտնվող սպասարկման կետերում: Կարող եք նաև օգտվել մեքենաների վարձույթի համար նախատեսված հավելվածներից կամ որոնել "ավտոմեքենաների վարձույթի մինի ծրագրեր" Alipay-ում կամ WeChat-ում: Գրանցվելուց հետո կարող եք հայտ ներկայացնել մեքենայի վարձակալության համար:

1. Օտարերկրյա ճանապարհորդները, ովքեր պատրաստվում են մեքենա վարձակալել, պետք է ունենան անձնագիր կամ օտարերկրյա մշտական կացության ID քարտ, վավեր չինական վարորդական իրավունք և միջազգային կամ ներքին վարկային քարտեր:

Նշում՝ Առաջին անգամ մեքենա վարձող օտարերկրյա ճանապարհորդները պետք է հաստատեն իրենց անձը հաստատող փաստաթղթի վերաբերյալ տեղեկություններն վարձակալելուց առնվազն մեկ աշխատանքային օր առաջ:

2. Օտարերկրյա քաղաքացիները, ովքեր դիմում են չինական վարորդական իրավունքի վկայական ստանալու համար, պետք է իրենց անձնագիրը, արտասահմանյան վարորդական իրավունքի վկայականը չինարեն թարգմանությամբ, վերջերս արված՝ 1 դյույմ (2,5 սմ) չափով, բաց գլխով, ամբողջական դեմքով և սպիտակ ֆոնի վրա արված գունավոր լուսանկարն ու այլ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնեն ճանապարհային երթևեկության կառավարման հանրային անվտանգության ծառայություն՝ դիմելու փոքր տրանսպորտային միջոցների համար ժամանակավոր վարորդական իրավունքի վկայական ստանալու: Օտարերկրացիները, ովքեր կարճ ժամանակով են մուտք գործում Չինաստան, կարող են դիմել ժամանակավոր վարորդական իրավունքի վկայական ստանալու համար՝ 3 ամիս վավերականության ժամկետով: Նրանց համար, ովքեր մտադիր են մնալ ավելի քան 3 ամիս, վավերականության ժամկետը կարող է երկարաձգվել առավելագույնը մինչև մեկ տարի: Վարորդական իրավունքները կարող են օգտագործվել Չինաստան կրկին մուտք գործելիս՝ իրենց վավերականության ընթացքում՝ առանց անհրաժեշտության նորից դիմելու վկայականի համար:

Նշում՝ Չինաստանը փոխճանաչման և վարորդական վկայականների փոխանակման համաձայնագրեր է ստորագրել Ֆրանսիայի, Սերբիայի, Բելգիայի և Արաբական Միացյալ Էմիրությունների հետ: Սա թույլ է տալիս վերը նշված երկրներից վարորդական իրավունք ձեռք բերած անձանց մեքենա վարել Չինաստանում կամ ստանալ չինական վարորդական իրավունք՝ առանց թեստ անցնելու:

VI.Բնակության վայր

Օտարերկրյա ճանապարհորդները կարող են հյուրանոց պատվիրել առցանց Trip.com հավելվածի միջոցով, կամ հեռախոսով կամ այլ միջոցներով:

(I) Օտարերկրյա ճանապարհորդները, ովքեր պատրաստվում են մնալ հյուրանոցներում, պետք է իրենց անձնագրերը, օտարերկրյա մշտական բնակության ID քարտերը և անձը հաստատող այլ վավեր փաստաթղթեր ներկայացնեն հյուրանոցի ընդունարան գրանցվելու համար:

(II) Հյուրանոցում հասանելի վճարման եղանակներն են՝ կանխիկ դրամը (չինական յուան), բանկային քարտը, Alipay-ը և WeChat-ը: Եթե ցանկանում եք վճարել բանկային քարտերով, ապա պետք է նախապես ճշտել, արդյոք

վճարման համար ընդունվում են Mastercard, Visa կամ այլ միջազգային բանկային քարտեր: Որոշ հյուրանոցներ ընդունում են այնպիսի վճարման եղանակներ, ինչպիսիք են Apple Pay-ը և PayPal-ը: Սակայն, նախքան վճարում կատարելը պետք է նախապես պարզել դրանց հասանելիությունը:

ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ ՄՆԱԼՈՒ ԵՎ ԳՐԱՆՑՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

VII. Վիզայի երկարացում

Վիզայով Չինաստան մուտք գործող օտարերկրացիների համար, եթե մուտքի սկզբնական պատճառը դեռ չի չեղարկվել, կամ եթե այլ օրինական պատճառներով դուք պետք է մնաք երկրում վիզայի մեջ նշված ժամկետի ավարտից հետո, առանց վիզայի տեսակը փոխելու անհրաժեշտության, կարող եք դիմել վիզայի երկարաձգման համար: Վիզայի երկարաձգման համար պահանջվող փաստաթղթերը հետևյալն են՝

(I) Վավեր անձնագիր կամ այլ միջազգային ճանապարհորդական փաստաթղթեր
(II) Օտարերկրյա վիզայի համար լրացված հարցաթերթիկ, վերջերս արված՝ 33*48 սմ չափով, բաց գլխով և սպիտակ ֆոնի վրա արված գունավոր լուսանկար ID-ի համար (տեղում կարելի է անվճար լուսանկարվել)
(III) Վիզան երկարաձգելու համար պատճառը հաստատող փաստաթղթեր
(IV) Այլ համապատասխան ընթացակարգերին վերաբերող օժանդակ փաստաթղթեր

Վիզայի երկարաձգման համար անհրաժեշտ փաստաթղթերի, մշակման ընթացակարգերի և մեթոդների, վճարների չափի և ստանդարտների ու այլնի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք այցելել Չինաստանի ներգաղթի ազգային վարչակազմի պաշտոնական կայք և "Ծառայություններ" բաժնում ծանոթանալ օտարերկրացիների համար վիզաների երկարաձգման, փոփոխման և վերաձևակերպման ուղեցույցին: Ճամփորդական փաստաթղթերի համար անհրաժտ լուսանկարների պահանջներին կարելի է ծանոթանալ ճամփորդական փաստաթղթերի համար լուսանկարներ ուղեցույցի "Ծառայություններ" բաժնում: Բացի այդ, կարող եք տեղական ելքերի և մուտքերի ընդունարանների գրասենյակների հասցեներն ու կոնտակտային տվյալները գտնել "Ծառայություններ" բաժնի "Գրասենյակային հարցումներ"-ում: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք նաև զանգահարել 12367 համարով:

VIII. Կացության թույլտվություն

Օտարերկրացիները, ովքեր Չինաստան մուտք գործելուց հետո պետք է բնակվեն երկրի տարածքում ո՛չ դիվանագիտական, ո՛չ էլ այլ պաշտոնական նպատակներով, ապա անհրաժեշտ է կացության

թույլտվության, այն երկարաձգելու, փոփոխելու կամ վերաձևակերպելու համար անձամբ դիմել Չինաստանի հասարակական անվտանգության մարմինների ելքի և մուտքի գրասենյակ անհրաժեշտ գործողությունները կատարելու համար: Չափազանց տաղանդավոր կամ խիստ պահանջարկ ունեցող օտարերկրացի մասնագետի, ինչպես նաև մինչև 16 տարեկան կամ 60 տարեկանից բարձր կամ հիվանդության ու այլ պատճառներով հաշմանդամություն ունեցող օտարերկրացու համար, հրավիրող կազմակերպությունը/անհատը, հայտատուի ընտանիքի անդամներն ու հարազատները, կամ մասնագիտացված սպասարկման գործակալությունները կարող են դիմել հայտատուի անունից: Կացության թույլտվություն ստանալու համար պահանջվող փաստաթղթերը հետևյալն են՝

(I) Վավեր անձնագիր կամ այլ միջազգային ճանապարհորդական փաստաթղթեր
(II) Օտարերկրյա վիզայի համար լրացված հարցաթերթիկ, վերջերս արված՝ 33*48 սմ չափով, բաց գլխով և սպիտակ ֆոնի վրա արված գունավոր լուսանկար ID-ի համար (տեղում կարելի է անվճար լուսանկարվել)
(III) Կացության թույլտվությունը երկարաձգելու համար պատճառը հաստատող փաստաթղթեր
(IV) Այլ համապատասխան ընթացակարգերին վերաբերող օժանդակ փաստաթղթեր

Կացության թույլտվություն ստանալու համար դիմումի նյութերին և պահանջներին, հիմնական գործընթացին և դիմելու եղանակին, ներկայացման ժամկետներին և այլ հատուկ մանրամասներին ծանոթանալու համար կարող եք այցելել Չինաստանի ներգաղթի ազգային վարչակազմի պաշտոնական կայք և "Ծառայություններ" բաժնում ծանոթանալ օտարերկրացիների համար կացության թույլտվություն ձեռք բերելու ուղեցույցին: Ճամփորդական փաստաթղթերի համար անհրաժտ լուսանկարների պահանջներին կարելի է ծանոթանալ ճամփորդական փաստաթղթերի համար լուսանկարներ ուղեցույցի "Ծառայություններ" բաժնում: Բացի այդ, կարող եք տեղական ելքերի և մուտքերի ընդունարանների գրասենյակների հասցեներն ու կոնտակտային տվյալները գտնել "Ծառայություններ" բաժնի "Գրասենյակային հարցումներ"-ում: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք նաև զանգահարել 12367 համարով:

Ներգաղթի ազգային վարչակազմի կայքի հասցեն է՝ https://www.nia.gov.cn

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ

IX. Աշխատանքի թույլտվություն

Աշխատանքի թույլտվություն ստանալու համար օտարերկրացիներից պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերը հետևյալն են՝

(I) Աշխատանքի թույլտվության համար լրացված հարցաթերթիկ

(II) Մասնագիտական որակավորումը հաստատող փաստաթղթեր

(III) Բարձրագույն ակադեմիական աստիճանի հավաստագրեր (դիպլոմ) կամ համապատասխան հաստատված փաստաթղթեր, ինչպես նաև ապոստիլով հաստատված մասնագիտական որակավորման վկայականներ *(«Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին» կոնվենցիայի մասնակից պետություններից)* կամ արտերկրում Չինաստանի դեսպանատների կամ հյուպատոսությունների կողմից

(IV) Դատվածության բացակայության մասին տեղեկանք

(V) Բժշկական փորձաքննության վերաբերյալ տեղեկանք

(VI) Աշխատանքային պայմանագիր կամ աշխատանքի մասին տեղեկանք (ներառյալ օտար ընկերությունների կողմից ուղարկված նամակներ)

(VII) Դիմորդի վավեր անձնագիրը կամ այլ վավեր միջազգային ճանապարհորդական փաստաթղթեր

(VIII) Դիմորդների լուսանկարները՝ բաց գլխով և ամբողջական դեմքով, որոնք արվել են 6 ամսվա ընթացքում

(IX) Ուղեկցող ընտանիքի անդամների համապատասխան օժանդակ փաստաթղթեր

(X)Այլ համապատասխան նյութեր, որոնք կարող են պահանջվել

Դիմելու եղանակն ու վայրը՝ գործատուների կողմից ներկայացված առցանց դիմումներ; տեղական սպասարկման կենտրոններ Չինաստանում աշխատող օտարերկրացիների համար:

X. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Չինաստանում աշխատող օտարերկրացիները պետք է ունենան սոցիալական ապահովության հասանելիություն՝ համաձայն Չինաստանի Ժողովրդական Հանրապետության սոցիալական ապահովագրության մասին օրենքի համապատասխան դրույթների և Չինաստանի տարածքում աշխատող օտարերկրացիների Սոցիալական Ապահովագրության համակարգի լուսաբանման համար ժամանակավոր միջոցառումների:

Դրա իրավունքն ունեցող անձինք

(I) Ֆիզիկական անձինք, ովքեր օրինականորեն աշխատում են Չինաստանում և օրինականորեն ստացել են օտարերկրացու աշխատանքի թույլտվություն, կացության թույլտվություն և մշտական կացության նույնականացման քարտ:
(II) Ֆիզիկական անձինք, ովքեր աշխատանքային պայմանագրեր են կնքել Չինաստանի տեղական գործատուների հետ և աշխատավարձ են ստանում գործատուներից, կամ նրանք, ովքեր պայմանագրեր են կնքել օտարերկրյա ընկերությունների հետ և ուղարկվել են աշխատելու Չինաստանում, որտեղ աշխատավարձը վճարվում է տեղական գործատուի կողմից:
(III) Աշխատունակ տարիքի անձինք (60 և ցածր տարիքի տղամարդիկ, 55 և ցածր տարիքի կանայք):

Ապահովագրական վճար

(I) Եթե Չինաստանի տարածքում աշխատող ֆիզիկական անձինք նոր են մուտք գործել սոցիալական ապահովության համակարգ, ապա պետք է վճարեն գումարն այն ամսից, երբ սկսել են աշխատել Չինաստանում:
(II) Ապահովագրության հիմնական վճարը և գործատուների կողմից օտարերկրյա աշխատողներին վճարվող մասնաբաժինը պետք է լինեն նույնը, ինչ չինացի աշխատողներինը՝ համաձայն տեղական օրենսդրության:

Փոխադարձ բացառումների դրույթներ

Ըստ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մարդկային ռեսուրսների և սոցիալական ապահովության նախարարության կայքի, Չինաստանը սոցիալական ապահովության պայմանագրեր է կնքել բազմաթիվ երկրների հետ, ինչպիսիք են՝ Գերմանիան, Կորեայի Հանրապետությունը, Դանիան, Կանադան, Ֆինլանդիան, Շվեյցարիան, Նիդերլանդները, Ֆրանսիան, Իսպանիան, Ճապոնիան, Սերբիան և Լյուքսեմբուրգը: Չինաստանի հետ սոցիալական ապահովության պայմանագիր կնքած երկրի քաղաքացիություն ունեցող ֆիզիկական անձինք՝ պայմանագրով նախատեսված կարգով կարող են ազատվել

որոշակի ժամանակահատվածների համար ապահովագրավճարներ կատարելու պարտավորությունից:

Սոցիալական ապահովության փաստաթղթերի գրանցման վայրեր՝ Հանրային ծառայությունների սրահներ կամ մարդկային ռեսուրսների ու սոցիալական ապահովության Բյուրոների սպասարկման կետեր այն վայրերում, որտեղ աշխատում են դիմորդները:

Մարդկային ռեսուրսների և սոցիալական ապահովության նախարարության կայքի հասցեն է՝ http://www.mohrss.gov.cn

XI. Անհատական եկամտահարկի վճարում

Ռեզիդենտներ և ոչ ռեզիդենտներ

Ֆիզիկական անձը, որը մշտապես բնակվում է Չինաստանում, կամ ֆիզիկական անձը, որը մշտապես չի բնակվում Չինաստանում, բայց հարկային տարվա ընթացքում ընդհանուր առմամբ ապրել է Չինաստանում 183 օր կամ ավել, համարվում է ռեզիդենտ ֆիզիկական անձ: Չինաստանի տարածքում կամ արտերկրից ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից ստացված եկամուտը ենթակա է անհատական եկամտահարկի՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության *"անհատական եկամտահարկի մասին"* օրենքի դրույթներին համապատասխան:

Ֆիզիկական անձը, որը Չինաստանում մշտական բնակություն չունի, կամ այն անձը, որը Չինաստանում մշտական բնակություն չունի, բայց հարկային տարվա ընթացքում Չինաստանում ապրել է ընդհանուր առմամբ 183 օրից պակաս, համարվում է ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ: Չինաստանում ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձից ստացված եկամուտը ենթակա է անհատական եկամտահարկի՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության *"անհատական եկամտահարկի մասին"* օրենքի դրույթներին համապատասխան:

Համախառն եկամտի տարեկան հաշվարկ (ճշգրտումներ)

Օտարերկրյա քաղաքացիները, ովքեր Չինաստանի հարկային ռեզիդենտներ են և հարկային տարվա ընթացքում ստանում են աշխատավարձի, անձնական ծառայությունների վարձատրության, հեղինակային իրավունքի վարձատրության և ռոյալթիների տեսքով համախառն եկամուտ, ապա պետք է լրացնեն տարեկան անհատական եկամտահարկի հայտարարագիր և ինքնուրույն, համապատասխան ձևերը, ներկայացնեն մինչև հաջորդ տարվա մարտի 1-ից հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածը; պետք է կատարվի տարեկան եկամտահարկի

հաշվարկ **(ճշգրտումներ)** հարկային մարմնի հետ: Հետևյալ պայմաններից որևէ մեկի հետ առընչվող օտարերկրյա քաղաքացիներն ազատվում են անհատական եկամտահարկի տարեկան հաշվարկից՝

(I) Տարեկան հաշվարկից ազատվելու համար հարկային քաղաքականության մեջ նշված պայմանները բավարարված են;
(II) Պահված և վճարման ենթակա հարկի գումարները համընկնում են;
(III) Դրամական միջոցների վերադարձման պայմանները բավարարված են, բայց հարկի վերադարձման հայցը մերժված է:

Եթե օտարերկրյա քաղաքացիները վստահ չեն, թե արդյոք տարեկան հաշվարկ պետք է իրականացվի, ապա նրանք կարող են համապատասխան քաղաքականության վերաբերյալ խորհրդատվություն և օգնություն ստանալ տեղական հարկային մարմինների հարկ վճարողների սպասարկման բաժիններից:

Տեղեկատվություն՝ տեղական ինքնակառավարման մարմինների սպասարկման սրահներ կամ հարկային մարմինների հարկ վճարողների սպասարկման սրահներ, Անհատական եկամտահարկի վճարման հավելված, և ֆիզիկական անձանց էլեկտրոնային հարկման հարթակ: Օտարերկրյա քաղաքացիները՝ նախքան առաջին անգամ Անհատական եկամտահարկի վճարման հավելվածից կամ ֆիզիկական անձանց էլեկտրոնային հարկման հարթակից օգտվելը, պետք է դիմեն հարկ վճարողների տեղական սպասարկման կենտրոններ գրանցման կոդը ստանալու համար: Հարկ վճարողները կարող են օգնության դիմել հարկ վճարողների սպասարկման կենտրոններին :

Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ հանդիսացող օտարերկրյա քաղաքացիները պարտավոր չեն կատարել տարեկան հաշվարկ:

Ֆիզիկական անձանց էլեկտրոնային հարկման հարթակի կայքի հասցեն է՝ https://etax.chinatax.gov.cn

Հարկային համաձայնագրերին համապատասխան արտոնյալ ռեժիմից օգտվելը

Չինաստանը կրկնակի հարկումից խուսափելու մասին համաձայնագրեր է ստորագրել 114 երկրների (տարածաշրջանների) հետ: Օտարերկրյա քաղաքացիները, ովքեր իրավունք ունեն նվազեցնել հարկերը կամ ազատվել դրանցից, կարող են ինքնուրույն որոշել նման արտոնություն ստանալու պայմանները: Նրանք կարող են օգտվել այս ռեժիմից՝ ինքնուրույն կամ հարկային գործակալների միջոցով դիմում ներկայացնելով, իսկ համապատասխան փաստաթղթերը պետք է

պահպանվեն ապագա հարցումների համար: Համաձայնագրերի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք ծանոթանալ հարկային պետական կառավարման կայքի "հարկային պայմանագրեր" բաժնին:

Հարկային պայմանագրերի բաժնի կայքի հասցեն է՝ https://www.chinatax.gov.cn/chinatax/n810341/n810770/common_list_ssty.html

ՆԱՍՏԱՆՈՒՄ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԵՎ ԲՆԱԿՎԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԲԻԶՆԵՍ ԱՐՏԱԳԱՂԹՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(2024 ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ)

ԱՌԵՎՏՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ,
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ,
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ,
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ,
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ,
ՆԵՐԳԱՂԹԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ,
ՉԻՆԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ,
ԱՐԺՈՒՅԹԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ,
ՉԻՆԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԽՈՒՄԲ, ՍՊԸ.